ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 փետրվարի 2021թ. թիվ 93-Ա

ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020թ. հուլիսի 4-ի թիվ 914-Ն որոշման 13-րդ կետը և նույն որոշման հավելված 2-ով հաստատված «Պետական ոչ առևտրային կազմակերպություններին, պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություն-ներին և հիմնադրամներին անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված պետական սեփականություն հանդիսացող գույքը վարձակալության տրամադրելու կարգի» 3-րդ կետի 4)-րդ ենթակետը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. ՀՀ Լոռու մարզային ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատություններում իրավաբանական և ֆիզիկական անձանց, ինչպես նաև անհատ ձեռնարկատերերի կողմից սննդի վաճառքի կետերի տարածքների վարձակալության տրամադրման գործընթացը կազմակերպելու համար ստեղծել մրցութային հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնաժողովը կանոնակարգում է նաև մինչև 15 օր ժամավճարով, ինչպես նաև թատերահամերգային գործունեություն իրականացնող կազմակերպությունների կողմից երրորդ անձանց կրթամշակութային, թատերահամերգային միջոցառում իրականացնելու համար տրամադրվող տարածքների օգտագործման և ծառայությունների մատուցման գործընթացը:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

2/19/2021

X

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2021թ. փետրվարի 19
ք.Վանաձոր

Հավելված.
ՀՀ Լոռու մարզպետի
2021թ. փետրվարի 19-ի
թիվ 93-Ա որոշման

Կ Ա Զ Մ
Մրցութային հանձնաժողովի

Կ.Աշրաֆյան - հանձնաժողովի նախագահ, մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ
Գ.Ղևոնդյան - հանձնաժողովի քարտուղար, Լոռու մարզպետարանի աշխատակից՝ մարզում անվճար բժշկական օգնության իրականացման աշխատանքները համակարգող

Հանձնաժողովի անդամներ.

Հ. Ավետիսյան - ՀՀ Լոռու մարզպետի խորհրդական
Ռ.Պողոսյան - մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ
Դ.Ստեփանյան - մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժնի /մարզային հողային պետական տեսչության/ ավագ մասնագետ
Մ.Նահապետյան - մարզպետարանի աշխատակից՝ մարզային ենթակայության դպրոցների կառավարման խորհուրդների ձևավորման և խորհուրդների կազմում փոփոխության գործընթացների աշխատանքները համակարգող

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

19/02/2021

X

ԱՐԹՈՒՐ ՄԽԻԹԱՐՅԱՆ

Ա.ՄԽԻԹԱՐՅԱՆ